

# Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

Լեւոնի մեռնելէն ետ

Հայոց քաղաւորութեան շարունակումը



Մն տարին որ Լեւոն իր մահկանացուն կնքեց Պարսի մէջ, Կիպրոսի Յակոբ Ա կամ Ճագէթ թագաւորը (1382—1398) « Հայոց թագաւոր » պսակուեցաւ Կիպրոսի մէջ : Ասիկա պարզապէս անսուանական տիպոս մըն էր, որ կաւելնար Կիպրոսի թագաւորներու տիպոսներուն վրայ, այս կարգէն էր նաեւ Կիպրոսի թագաւորներուն տրուած « Երուսաղէմի թագաւոր » տիպոսը : Բայց կերեւի թէ Կիլիկիայի Հայերն իրբեւ օրինաւոր թագաւոր ճանչցած են Յակոբն ու իր յաջորդները, վասն զի առաջին անգամ Կ. Պոլսի Հայաստան լրագրին մէջ (31 Յունվ. 1852 թ.) եւ յետոյ Դիւլօրիէի շատ անգամներ յիշուած գրքին մէջ (եր. 737) հրատարակուած յիշատակարան մը, որ գրուած է Տաղարանի մը վերջը, հետեւեալ յայտարարութիւնը կընէ. « Արգ գրեցաւ եղան(ակ)աւոր տաղարան հին եւ նոր, զոր առաջին սուրբ հօրքն են եղանակեալ ի թուին ՊԽԴ (=1395), ի հայրապետութեան տեառն Կարապետի եւ ի թագաւորութեան Կիպրոսի Ճագէթի, որ եւ Հայոց այլ աւրհնեցաւ եւ անուանեցաւ թագաւոր : Գրեցաւ ձեռամբ վերջին եւ մեղսաթաւալ եւ անարժան գծաւղի Եսայի արեղայի, ի ք(աղաքն) Սիս, ընդ հովանեաւ սուրբ Նիկաւ(ղայ)ոսի եւ կենսակիր սուրբ նշա(նին) Չորոյ վանից եւ (Արքայ)կաղնոյ եւ Վահկայի) սուրբ նշանին, եւ աջոյն սուրբ Լուսաւորչին, ի լաւ եւ յընտիր աւրինակէ Յեսու փիլիսոփային, որոյ տէր ողորմեացի . . . » :

Յակոբ Ա-ի մեռնելէն ետը Կիպրոսի, Երուսաղէմի եւ Հայոց թագաւորութիւններն անցան իր զաւակին՝ Յանոսի (1398—1432), Յանոս Գեւորացիներու եւ Եգիպտոսի սուլտանին զէմ պատերազմ հրատարակեց, բայց սուլտանէն չարաչար յաղթուելով գերի բռնուեցաւ, եւ մեծ փրկանք ու տարեկան տուրք մը վճարելով միայն կրցաւ ազատիլ :

Յանոսի յաջորդեց իր որդին Յովհաննէս Բ (1432—1458), որուն երկու զաւակները — Կարլոտոս ու Յակոբ — իրենց հօր մեռնելէն ետը՝ գահին տիրանալու համար իրարու հետ թշնամացան : Եւ որովհետեւ Կարլոտոս Յովհաննէսի օրինաւոր աղջիկն էր, իսկ Յակոբ՝ անհարազատ, թագաւոր